ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ГОСУДАРСТВЕННАЯ СЛУЖБА
БЕЗОПАСНОСТИ ПИЩЕВЫХ ПРОДУКТОВ
МИНИСТЕРСТВА СЕЛЬСКОГО
ХОЗЯЙСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

"13" 07 2018
4Բ35-18

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ ՀՐԱՆՏ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ
(ՀՀ, ք. Երևան Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ. 041563363)

Ի պատասխան Ձեր 2018 թվականի հուլիսի 4-ի
թիվ CEA7-0A2D-8147 գրության

Հայտնում եմ Ձեզ, որ Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայության (Ռոսսելխոզնադզոր) կողմից սույն թվականի հունիսի 14-ից Հայաստանի Հանրապետությունից ՌԴ տարածք պրիմատների փոխադրման ժամանակավոր սահմանափակման պատճառ է հանդիսացել՝

_ ՀՀ ներմուծված և այնուհետև ՌԴ փոխադրված կապիկները, որոնք նույնականացված չեն եղել ինչպես նաև ուղեկցվել են անասնաբուժական սերտիֆիկատով, որում եղել են որոշակի անհամապատասխանություններ երրորդ երկրներից ԵՏՄ տարածք ներմուծվող ենթահսկման բեռների միասնական անասնաբուժական պահանջների համեմատ:

_ Երրորդ երկրի կողմից տրամադրված անասնաբուժական սերտիֆիկատում եղած անհամապատասխանությունները եղել են տեխնիկական բնույթի: ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (Ծառայություն) կողմից երրորդ երկրի լիազոր մարմնի հետ տարված աշխատանքների արդյունքում այդ անհամապատասխանությունները շտկվել են:

_ 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնության տարածք է փոխադրվել 35 գլուխ կապիկներ:

_ Ներկայումս Ծառայության կողմից աշխատանքներ են տարվում Ռոսսելխոզնադզորի հետ ՀՀ-ից ՌԴ-ի տարածք կապիկների փոխադրման ժամանակավոր սահմանափակում կարգավիճակի վերացման ուղղությամբ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատ.՝ Անասնաբուժության տեսչություն / Հ. Սերոբյան
(+374 10) 20 38 56 / 109

Կոմիտասի պող. 49/2, 0051 Երևան, ՀՀ
Пр. Комитаса 49/2, Ереван 0051, РА

Тел./факс: (+374 10) 20 38 53
Эл. почта: hs@ssfs.am
Веб-сайт: www.ssfs.am